

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлясь, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարությունների համար վճարում են
խաղաղանկար բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Գրան է այժմ կը հասկանաք. Համերայնությունն
նպատակ ունի հիմնարկություններ. Ներքին Տե-
ստիկ խմբագրությունն. Քիւրդականական հասարակութեան
նկար. Մատենագրութիւն. Հայոց թատրոն. Օպե-
րային ներկայացումներ. Նամակ Կիւմիկի.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ՄԱ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից.
Արաբներ լուրեր. ՍԱՌԻ ԼՈՒՐԵՐ. ՀԵՆՈՒԳԻՐ-
ՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Քուրայի անցքերը.

ԳՈՒՆԷ ԱՅԺՄ ԿԸ ՀԱՍԿԱՆԱԳ

Ատրպատական թեմի առաջնորդական
փոխանորդ Սարաճեան վարդապետը, ինչ-
պէս երևում է ՎՇԱԿԻ Թղթկանութեան ինչից,
տեղի տալով ժողովրդի միահամուռ և ան-
հրաժեշտութեան ընդհանուր ջանքերին
հրաժարվել է իր պաշտօնից և յանձն է
առել ինքն անձամբ միջնորդել էջմիածնում,
որ շուտով Թաւրիզ ուղարկվի մի արժանա-
ւոր եպիսկոպոս: Մեր անպայման զօրութեմ
ենք փոխանորդ վարդապետի այդ քայլը,
որ գրեթէ անօրինակ է մեր առաջնորդնե-
րի տարեգրութիւնների մէջ. Համանկարկով
ժողովրդի ջանքերին; Հասկանալ, որ
կան պարագաներ, երբ հոգեւորականը, մա-
նաւանդ թեմի առաջնորդը պարտաւոր է
ի նկատի առնել հօտի ցանկութիւնը և
տեղի տալ աւելի արժանաւորին,— դա մի
այնպիսի քաղաքացիական առաքելութիւն
է, որին հայ հոգեւորականներից գրեթէ ոչ
ոք մինչև այժմ ընդունակ չէր հանդիսացաւ:
Ժողովրդի հետ միասին Սարաճեան վար-
դապետն էլ եկել է այն համոզման, թէ
Պարսկաստանի հայերի ներկայ կրօնական
պրոլետարի մէջ անհրաժեշտ է, որ Ատր-
պատականի առաջնորդը լինի ռուսահայա-
տակ, եռանդուն և ժիր մի հոգեւորական:
Այդ կարիքը ոչ միայն անհրաժեշտ է, այլ
և անյետաձգելի: Եւ ահա ինչու: Երբ ան-
ցեալ տալի Թաւրիզում տեղի ունեցան ժո-
ղովրդական յուզումները, ռուսաց հիւպա-

տոսարանը և Թեհրանի ռուսաց դեսպանա-
տունը եռանդուն միջոցներ ձեռք առան
հայերի պաշտպանութեան համար: Սա-
կայն հայոց առաջնորդ Սարաճեան վար-
դապետը ոչ միայն չէր միացաւ ռուսաց կա-
ռավարութեան ջանքերին, այլ և մի տե-
սակ հակադիր ոյժ ներկայացաւ նրա դէմ
և աշխատեց նսեմացնել հիւպատոսարանի
զործունէութիւնը: Նա ոչ միայն հանդէս
գութ չեկաւ իրեն ջերմ բողոքող կատար-
ված հարստահարութիւնների դէմ, որոնք
արդիւնք էին թիւրքաց կառավարութեան
կոտորածների և էմիսարների ազդեցության,
այլ աշխատեց ինչպէս «անուշ տեղը կա-
պել» նրա այդ տատանվող, անհաստատ
վարմունքը պատճառն այն էր, որ նա
թիւրքահայատակ էր և ստիպված էր չը
զորուել թիւրքաց հիւպատոսի զայրոյթը:
Պարզ է, որ ներկայ պայմաններում, երբ
քաղաքական հանգամանքները, թիւրքաց
կառավարութեան ինտերեսները, ինտեր-
պատի պատճառն այն էր, որ նա
թիւրքահայատակ էր և ստիպված էր չը
զորուել թիւրքաց հիւպատոսի զայրոյթը:
Պարզ է, որ ներկայ պայմաններում, երբ
քաղաքական հանգամանքները, թիւրքաց
կառավարութեան ինտերեսները, ինտեր-
պատի պատճառն այն էր, որ նա
թիւրքահայատակ էր և ստիպված էր չը
զորուել թիւրքաց հիւպատոսի զայրոյթը:
Պարզ է, որ ներկայ պայմաններում, երբ
քաղաքական հանգամանքները, թիւրքաց
կառավարութեան ինտերեսները, ինտեր-
պատի պատճառն այն էր, որ նա
թիւրքահայատակ էր և ստիպված էր չը
զորուել թիւրքաց հիւպատոսի զայրոյթը:

րի և յետադիմութեան գլխաւոր պատճա-
ռը եղել են տգէտ, շահամոլ և կաշառա-
կեր առաջնորդները:
Եւ Ժողովուրդը, որ շարունակ դիմել է
էջմիածին, բացատրել, հասկացրել այդ կա-
րեւոր հանգամանքները, թախանձել, այժմ
նոյնպէս, երբ մահմետական ֆանատիկո-
սութիւնը և թիւրքաց ինտերեսները սպառ-
նում են նրան նոր վտանգ, պէտք է ձեռնու-
նայն մնար, եթէ ինքը Սարաճեան վարդապե-
տը չըմբռնէր թալէի կարեւորութիւնը և
չը հեռանար ասպարէզից: Բայց արդեօք
էջմիածինն էլ կը հասկանայ թալէի կա-
րեւորութիւնը. կը հասկանայ, որ պարս-
կահայերի այս կրօնական թալէում պէտք
է, վերջապէս, սթափվել, մի կողմ թողնել
նախանձը, վանական գծուծ ինտերեսները
և հօտին օգնութիւն հասնել: Իսկ հօտին կա-
րեկ է օգնել միայն ուղարկելով մի արժա-
նաւոր, իր դիրքին և նշանակութեան հա-
մապատասխանող մի հոգեւորական: Արդեօք
էջմիածինն այժմեան վարիչները զոնէ ան-
մեղ տանջվող պարսկահայերի համար մի
թալէ կը մտածանք իրանց նախանձը, կը
հասկանան, որ իրանց հակառակորդներին
հալածելով, ամեն տեղից յետ քշելով, մա-
զի չափ չեն փոխի այն իրողութիւնը, որ
այդ հալածվածների մէջ կան մարդիկ, ո-
րոնք ամբողջ գլխով բարձր են իրանցից:
Ատրպատականը կարօտ է մի եռանդուն
հոգեւոր. արդեօք այժմ էլ չեն բարեհաճի
լիշեղ Սուրբ Խաչ վանքի հալածականին...

ՀԱՄԵՐԱՇԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԻՄՆԱԳՐՈՒ- ԹԻՒՆՆԵՐ

Անդրկական նշանաւոր կին գրող Հենրիկ Ուոր-
դի նախաձեռնութեամբ նորերս Լոնդոնում բաց-
վեց մի մեծ հիմնարկութիւն, որի նպատակն է
հասարակութեան զանազան խաւերին պատկա-
նող մարդկանց միմեանց մտնեցնել և տալ նը-
բանց օգտակար և զուարճացնող պարագա-

մունքներ: Այդ հիմնարկութեամբ իրագործվում
է այն ծրագիրը, որ տիկին Ուորդը ներկայացրել
էր իր տան տարի սրանից առաջ իր բռնա-
նեղի մէկուս Բոմանի հերոսը մեռնելու ժամա-
նակ ծրագրում է իր երեակայութեան մէջ—«ե-
րեքարկանի մի տուն» բարձր և լուսաւոր սե-
նեակներով, լաւ կահաւորված և տաք, նրա մէջ
կայ մի մեծ դահլիճ կերակրօք պատիստու-
թիւնների, կոնցերտների, զուարճութիւնների և
զբոյցների համար, կան սենեակներ, որոնք ծա-
ռայում են իրեն մանուկների կուրս, երկու սե-
նեակ կանանց և աղքատների համար, հարուստ
գրադարան և ընթերցարան՝ զարդարված պատ-
կերներով և բաց երկու սենեկ յաճախորդների
համար, երեք չորս սենեակներ զանազան կոմի-
տեաների նիստերի համար և մի դահլիճ մարմ-
նամարզական վարժութիւնների համար: Տիկին
Ուորդը գաղափարը տպագրութիւն գործեց ըն-
թերցող հասարակութեան վրա և յայտնի բարե-
գործ Էդուարդս վոնեց մահին կերպ նպաստել
տիկին Ուորդի ծրագրած հիմնարկութեան իրա-
գործելուն: Էդուարդս նուիրեց այդ գործին հա-
մար 14,000 ֆունտ ստերլինգ կամ 140,000 ռուբ-
լի գումար. այնուհետև ուրիշ աղբիւրներից էլ
ժողովեց այդ գումարի կէսի չափ և ամբողջ
հիմնարկութիւնը գլուխ եկաւ աւելի քան 200,000
ռուբլի ծախքով:

Թէ այս և թէ մի քանի ուրիշ նոյնանման
հիմնարկութիւնների միջոցով Անգլիայի լուսաւոր-
ված և ապահով դասակարգը կամենում է ամե-
նասեր չլինար մէջ մտնել ժողովրդի միւս դա-
սերի հետ և մտերմ յարաբերութիւն ու համե-
բաշխութիւն հաստատել ազգաբնակչութեան զա-
նազան խաւերի մէջ: Եւ ներկայումս ոչ մի երկ-
րում այնքան մեծ և աշող փորձեր չեն կա-
տարված այդ ուղղութեամբ, որքան Անգլիայում,
ուր դարերից ի վեր արիստօկրատիան աշխա-
տում էր իրան առանձնացած պահել, իբրեւ ար-
տօնված դասակարգ: Այժմ փոխվել է և փոխ-
վում է նախկին վերաբերմունքը դէպի ժողով-
րդի ընդհանրութիւնը: Դասակարգերը իրանց
հիմնաւորութիւններով այլ ևս չեն դիմանում միաց-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՈՒՐԱՅԻԱՆ ՅԳԵՐԸ

Պօստ օն, մարտի 1-ին

Քանի որ այսօր Քուրայի կնճառ խնդիրը
իբրեւ սպառնալիք երևան կուգայ միջազգային
խաղաղութեան, մանաւանդ Միացեալ-Նահան-
գաց մարտանաւ «Վէյնի» խորհրդանշան կորուս-
տէն ի վեր, թերեւ հետաքրքրական լինեն հայ
ընթերցողաց՝ ապստամբ կղզւոյն մէջ տեղի ու-
նեցած դէպքերը, որ մենք համառօտակի առաջ
կը բերենք, հետեւելով ամերիկեան մամուլի տուած
տեղեկութիւններին:
Անցեալ հինգշաբթի Քուրայի վերջին յեղա-
փոխութեան երրորդ տարեդարձն էր: Այս երեք
տարեկեան միջոցին կղզւոյն ապստամբները դի-
մադնաբար կուգում իրենցմէ անհամեմատ մեծ
ուժեղութեամբ հետ իրենց գոյութիւնը պահել վերջ
կրցած են նաեւ խորտակել սպանական լուծը
կղզւոյն գրեթէ երկու երրորդ մասին մէջ, ստի-
պելով իրանց երբեմնի տէրերը ամրացած քա-
ղաքներու մէջ պաշտպանողական դիրք բռնել:
Եւ այս ամենը բրած են հայրենասէրները ա-
ռանց ու և կառավարութիւնն մը մաղի չափ
օգնութիւն ընդունելու, նոյն իսկ հակառակ
իրենց դրացի Միացեալ-Նահանգաց կառավա-
րութեան պաշտօնական թշնամութեամբ: Եւ քա-
ղաքային Ամերիկա զբաղված բանակներու ամենէն
հզօրը, Սպանիոյ զօրութիւնը ամօթեմար կը
մնայ բուռ մը քաղերու առջև, որը չը յաղթվե-
ցան ոչ սուրով, ոչ կրակով և ոչ ալ խոտուումնե-
րով ու կաշառքով: Պատմութիւնը այսպիսի յա-
մառ քաղութեան օրինակներ ընդ ունի, ինչպէս
նաեւ իստոյ դժուար պիտի լինի սպանիացւոյ
զործած անգլութեանց նմանը գտնել աշխարհի

ու և է մասի պատմութեան մէջ: Եթէ ըստա-
ններ ստոյգ են, նոյն իսկ Համիդին ջարդերը
ոչինչ են բաղադրամբ Ուէյլերի զաղանու-
թեանց: Սակայն այս երեք տարվան պատերազ-
մը գլուխ մէ միայն Քուրայի արհուտ պատ-
մութեան. Քուրայի մարտիրոս հայրենասէրներու
ցուցակը հարիւրաւոր էջեր պիտի լեցնէր նոյն
իսկ 1849 թվ առաջին զինեալ դիմադրութեան
առաջ. սպանական բանտերը, Սիբիրիէի տան-
ջարանները, կախաղանը հաղաբար կեանքեր
խլեցին Քուրայի ամենէն ընտիր երիտասարդու-
թիւնէն, մինչև օր մը կղզւոյն ճարտանալ վէճի
դիմեցին: 1850-ին առաջին քուրայի զօրավարը՝
ժէնէրալ Լօփս զրօշակ բարձրացուց Սպանիոյ
դէմ, մի շարք կարճատև յաղթութիւններ տա-
րաւ, սակայն չուտով յաղթվեցաւ, գերի բռնվե-
ցաւ և զլխաւորեցաւ: Հոկտեմբերի 10-ին 1868
թ. 18 տարվան խռովութիւններէ, դաւերէ և
յուզումներէ վերջ մի ահաբեկ ապստամբութիւն
ծագեցաւ Նարա գաւառը, որ տեղի 10 տարի:
Խաղաղութիւնը, որ կնքվեցաւ 1878-ին, ուրիշ
բան չէր, եթէ ոչ վերադարձը մը. սպանիացի
պիտի միջ միջ պահել իրենց խոտուումը և քուրայի
ալ որոշած լինելով չընդունել Սպանիոյ լուծը,
ուրիշ բան չէին կրնար ընել, բայց եթէ առ-
թէն օգուտ քաղել պատրաստվելով վերջնական
պատերազմին: Այդ պատրաստութեան համար
հարկ եղաւ 17 տարի: Յեղափոխութեան վրայի
եղաւ ձօղէ Մարթի, Միացեալ-Նահանգաց մէջ
ապրող աքսորեալ քուրայի մը, որ իր ճարպի-
կութեամբ և քաղութեամբ նշանաւոր հանդիսա-
ցած էր:

Նա կազմակերպեց «Քուրայի յեղափոխական
կուսակցութիւնը», այդ անուան տակ միացնելով
բոլոր քուրայացւոյ ընդունելը և ընկերութիւննե-
րը: Անգամայ մեծամասնութիւնը քանի որ
Միացեալ-Նահանգաց մէջ կը գտնուէր, ընկերու-
թեան գլխաւոր գործն էր դրամ հաւաքել, սա-
կայն աղքատութիւնը ծանր խաղճողութիւն կը

հանէր այդ գործին առջև. ընկերութեան անդու-
կը շատ քիչ դրամ կը պարունակէր արդէն, երբ
այդ եղանակ ալ Քուրայ վէճը փոխադրելու անպա-
շտօլ փորձի մը մէջ կորուսած էր, սակայն Մար-
թի յաջողած էր իրեն միացնել հին յեղափոխու-
թեան հերոսներին Մաքսիմօ Վոմէս և Անտօնիօ
Մասէօ: Նա գիտէր թէ որքան խոր է կղզւոյն
գիտցաւ ընտրել յարմար թալէն, երբ հրաման
տուաւ ապստամբութեան և ինքն ալ անձամբ
միացած Վոմէսին, պատերազմի դաշտը փոխեց:
Այդ վճռական թալէին հայրենասէրները միայն
70,000 տղար ունէին, սակայն պատերազմի
համար այդքան աննշան գումարով մը քուրա-
յից մինչև հիմա Սպանիոյ այնքան կեանքի կո-
րուստ պատճառել է վերջ, Վոմէսն տուած են
250,000,000 տղար և Միացեալ-Նահանգաց ալ
առեւտուրի և ստացուածոց 300,000,000-ի կո-
րուստ պատճառած:

Ապրիլի 11-ին Մարթի ոտը կոխեց իր հայրե-
նիքը, ուր փետրվարի 24-էն սկսեալ ընդհարում
ներ սկսան էին տեղի ունենալ. քառասուն օր
ալ չը կրցաւ ապրել մեծ հայրենասէրը իր սիրած
կղզւոյն վրա: Մայիս 19-ին նա սպանվեցաւ
կուռ մը մէջ, բայց այդ կարճ միջոցին նա
արդէն յաջողած էր Քուրայի զանազան դա-
ւառներէն ներկայացուցիչներ հրաւիրել ու գու-
մարել մի ազգային ժողով ժամանակաւոր կա-
ռավարութիւն մը հաստատելու և սահմանադ-
րութիւն մը կազմելու: Ժողովը՝ չը վերջացաւ
մինչև այդ տարու սեպտեմբերը, սակայն
Մարթի մեռնելէ առաջ գոհունակութեամբ տե-
սաւ, որ իրեն հետ ամեն հայրենասէր կը փա-
փաքէր միայն անկախ հասարակագետութեան:
Մարթի մահէն երկու ամիս առաջ կղզւոյն
մի ուրիշ անկախ զամառ եղաւ զօրավար Մա-
սէօ, բուռ մը հետեւորդներով, մի քանի հրացա-
նով ու փամփուշտով: Ճամայկա կղզին եկած

էին հայրենասէրները բաց մակրկով մը: Յամառ
կոխած օրերին Մասէօն և իր եղբայրը չըջա-
պատեցին սպանիացի զինուորներ, սակայն քու-
րայից կարեցին այդ գիծը և քաղցին դէպի
կղզւոյն ներսերը: Մասէօյի անուան խաղաղ
տուաւ Սպանիոյ, Հաւանա և Մադրիդ ստորին
ցան, լսելով հայրենասէր զօրավարին ներկայու-
թիւնը, սակայն այդ անուան, որ պտելի էր
թշնամեաց, որքան քաղցր կը հնչէր իր տարա-
բախտ ու գերի հայրենակցաց: Քանի մը օրէն
տասը հազարէ աւելի քուրայի կորիւններ, միա-
ցեւ էին իրենց սիրելի զօրավարին դրօշին տակ:
Յեղափոխութիւնը յաջողած էր:

Սպանիա սարսափելով ետ կանչեց կղզւոյն
կառավարիչը: Ապրիլի 16-ին զօրավար Մարթի-
նէս Քամբօս, սպանիացւոյ ամենէն կարող զօ-
րապետը, ցամաք եկաւ 25,000 զինուորներով:
Քամբօս շատ ժամանակ և ուժ վատնեց զուր
տեղը մանր մուշը կոխներով, որոց յաղթու-
թիւնը գրեթէ միշտ քուրայացւոյ կողմը կը մնար:
Նա առաջին օրէն, կուեն, հասկցաւ թէ այս
անգամ խնդիրը շատ տարբեր էր 1868-էն, այժմ
գործ ունէր փորձ և կիրթ զօրավարներու և
կորիւն զինուորներու հետ, հին կոտորածներէն
նոր բանակներ ստեղծվել էին: Այդ աննշան
ընդհարումները որքան որ Սպանիոյ ուժին և
ազդեցութեան կը վնասէին, նոյնքան և աւելի
կը զօրացնէին քուրայացւոյ դիրքը, որոց երկու
զօրապետները անգուր կաշխատէին մարդը զին-
ւորները, նորանոր գաւառներ կարգաւէին, նո-
րեկներէ գնդեր կը կազմէին և սպանիացիներէ
առնված լաւագոյն հրացաններով կը զինէին ի-
րենց հետեւորդաց անդէն մարդ:

Հայրենասէրներու բանակը սկսաւ սպառնալ
կղզւոյն ներսերը գտնվող սպանիական քաղաք-
ներու, որոց յարաբերութիւնը ծովուն հետ ալ
կա խղճած էր: Զօրավար Քամբօս 8000 հոգով
արշաւեց ներս՝ կէս պաշարեալ քաղաքներուն
օգնելու: Քուրայի զօրավար Մասէօ իր 6000-ով

Նախաճաճ արքա կոչուր չէ՝ կարող յաբոտեան տե-
ն: Սպանիա տնանկութեան հասած է. առկից
տ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը
կրնար շատ երկար համբերել իր առևտուրի
ստին, ճգնաժամը հասած է, շատ չանցած,
իրաբաղող կղզիքն, Անտիլեան ծովի մարզաբարձը,
սոս ակոխի դառնալ կրկին՝ իր քաջ որդիներու
փած արեան շնորթն: Արմեն

տեղը է անուանում: Կան նաև մի քանի սխալ-ներ. Չղալիս բառը ներդաշնակի տեղ է դր-ում, СКАРАТИНА սխալ թարգմանում է կարմ-րով, իսկ կարմրովին հարսանիք անունն է տալիս:

Կիրքը գործարված է բազմաթիվ նկարներով, որոնք լուսաբանում են և հետո հասկանալի են դարձնում հեղինակի ասածները: Խորհուրդ ենք տալիս կարդալ այս օգտակար գրուածքը:

Բժ. Վ. Արծ.

ՀԱՅՈՑ ՔԱՏՐՈՆ

(Բազուկ խմբի հիմնադրող Ներսիսյանը)

Բազուկ խմբի ոչ մի ներկայացում մինչև այժմ չէ անցել այնպիսի անասմանով, ինչպես Օս-տրովսկու «Անմեղ յանցաբաններ» կոմիտեն, որ կիրակի, մարտի 15-ին, արվելի ի նպաստ Յ. Արեւիկայի: «Անմեղ յանցաբաններ» կամ, առելի ճիշտ թարգմանած, «Անմեղ մեղադրվածներ» խո-ւսապես մի մեղադրում է գրականական այդ ձե-ւին յատուկ չը պատճառաբանված վարմունք-ներով, անհասկանալի պատահարներով, ան-կերպարան անձնատուրություններով, երկարածի-թիվ խոսակցություններով, և բարեառու վերջապա-րություններով, յուրաքանչյուր արդարների ու «ան-մեղ մեղադրված» և ի խայտարակի իսկա-կան մեղադրված: Սա սակայն չը նայելով դրան այդ կոմիտեն ցնցող տպավորություն է գոր-ծում նայն իսկ այդ բոլոր պակասությունները հասկացող հանդիսատեսների վրա, եթե միայն նա խաղացվում է այնպես, ինչպես խաղացին կերակրի օրը հայ դերասանները: Սա այդ շատ հասկանալի է: Այդ մեղադրանքն իսկապես և ըզ-դացված մեղադրանք է և պատկանում է այնպի-սի կրասիկ դրամատուրգի գրչին, ինչպես Օստ-րովսկին է: Կործողությունները փոխարինող խո-սակցությունները ձեզ չեն ձանձրացնում, որով-հետեւ այդ խոսակցությունները ունեն բարձր դե-րասանական արժանատիություններ, գեղեցիկ են, հետաքրքիր և սրամիտ. տիպերի մեծամաս-նությունն զգալիություններ ձեզ չէ վրդուկեցնում, որովհետեւ ձեր ուշադրությունը միշտ գրաված է լինում Նեղիմազի և Շմադայի վերին աստի-ճանի իրական ու բնական տիպերով, որոնցից մեկը ձեզ ցնցում է ու լացացնում, միւսը՝ ծի-ծաղեցնում առողջ ծիծաղով, իսկ չէ որ դուք գնում էք թմաբուր, որպեսզի գեղեցիկ և կե-տական տպավորությունների միջոցով ձեզ լաց պատճառեն կամ ծիծաղ. վերջապես, ինչ վերա-բերում է բարեառու և մի փոքր հրաշալի վեր-ջապարկներ, մենք այդ ներքին ենք հեղինակ-ներ, ոչ, մենք չորհրդավոր ենք նրանք, որ նա միայն մի փոքր խաբար է, չէ որ «ТЫМЫ НИЗКИХЪ МОТИВЪ НАМЪ ДОРОЖЕ НАСЪ ВОЗВЫШАЮЩІЙ ОБМАНЪ».

Օրվայ հերոսը այդ երեկոյ բնեկեցիկանուն էր, որ խաղում էր ամենից մեղադրող, ապօրինի դա-նակ Նեղիմազի: Գրքը: Բեմ դուրս գալու առա-ջին բուլետից պ. Սեդեկան հիմնադրողը հանդի-սատեսներին էր նախատեսված տեղով և ձայ-նով: Նրա ձակառիկ դուք պարզ տեսնում էիք ապօրինություն անձնից դուրսը. նրա լայն բաց-ված աչքերի լուսաւոր, բայց հարցական հայեաց-քում փայլում էին մտքից ժառանգված ազնիւ-քանդակներ և իր ծագման հանդիմանի առաջ տարակուսված հոգին, իսկ աղեկուտը, ցնցող ձայնը ձեզ բացատրում էր, թէ ինչքան անար-դար տանջանքներ է կրել իր կարծառն կեանքի ընթացքում այդ՝ ծնողներից ձգված անմեղ նա-խատիվը, որից, թէն մի փոքր ինչպակասաց-րած, բայց անկասկած կենդանի տվյալ ստեղ-ծեց պ. Արեւիկայ: Մի բան միայն մեզ տար-բնակ է թւում. պ. Սեդեկանի խաղը դնում է հաւասար, առանց թուլանալու, առանց եղե՛ջ-ների, ինչպես միւս դերասաններին խաղը, այդ լաւ է. բայց առելի լաւ կը լինէր, եթէ այդ խաղը ոչ թէ հաւասարապէս ընթանար, այլ հա-ւասարապէս որոշանար, համեմատ գաղափարի-տին պիտեպի վերջում: Բայց այդ այնպիսի ըն-դունակ դերասանից, ինչպես Արեւիկան է, կա-րելի է պահանջել, որ նրա արտասանությունը միատեղանայ գեղարվեստական լինի, առանց «շարժակալություն», առանց «գիտելի»-ի: Բե-նեկեցիկանուց յետոյ ամենամեծ աշողություն ունեցաւ պ. Արաքսեան: Շմադայի դերում: Այդ դերասանին կարելի է շատ լաւ համարել համա-րելի միայն պէտք է ցանկանանք, որ նա նայն-քան հոգ տանի դերի ամբողջությունը վրա, որ-քան նա հոգ է տանում նրա առանձին մոմենտ-ները վրա: Բացի այդ, չէ կարելի չը նկատել, որ պ. Արաքսեան պէտք է ամենաարտասանական բուլետներին հանդիստ թողնի հասարակության, որպէսզի զի նա կարողանայ իր ամբողջ ուշա-դրությունը կենտրոնացնել Նեղիմազի վրա և լայն ու ծիծաղը խառնելով իրար չը փչացնեն ամբողջ պիեսայի տպավորությունը: Տիկին Սի-

րանյան (դերասանուհի Կրուկինյան, Նեղիմազի-մայրը) խաղի մէջ նկատվում էր մի տեսակ ստանդարտ, յոգնածություն: Այդ առաջանում էր մասամբ դերի զգալիությունից, մասամբ նը-րանից, որ տիկին Սիրանյան չէ հասկանում ուս-կանց հոգեբանությունը, բայց գլխաւորապէս նը-րանից, որ տիկինը միշտ անհասարկ է խաղում, կայծակի պէս տեղ-տեղ լուսաւորելով իր դերի մի քանի մոմենտները միայն: Այդ օրը առանձ-նապէս աչքը էր ընկնում տիկինը մի արտաքին պակասությունը՝ ցած ձայնով խօսելը: Միւս դերակատարները առանց բացատրված լաւ էին կամ, յամենայն դէպս, տանելի: Թատրոնը գրեթէ լի էր: Բենեկեցիկանուց ընդունեցին մեծ ոգևորություններ, բայց ոչ որ չէր մտածել ընծայ տալու մասին: Սակայն նա կարող է միտնարել իրան. իսկական դերասանի համար հանդիսա-տեսները լացը ամենալաւ ընծան է: Տ. Յ.

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Շաբաթ, մարտի 14-ին, իտալական խումբը ներկայացրեց Ռիֆլին «Պարտան-ներ» օպերան, որ վաղուց չէր ներկայացված Ռիֆլինում: Այդ օպերայի բովանդակությունը հե-տեւան է. պարտան Վալտերի աղջկա՝ Էլի-րայի վրա սիրահարված է պարտան Ռիչարդը, բայց Էլիրան սիրում է Ստիվարտի կուսակից Տալբոթին, որ նայնպէս սիրում է նրան: Տալբոթ պարտաների ձեռքից խորամանկութեամբ ա-ղաղում է Կարլ I թագաւորի այրի Հենրիէտ-տային և ստիպված է լինում փախչել նրա հետ: Էլիրան իմանալով, որ Տալբոթ փախել է մի կնոջ հետ և հաւատացած լինելով, որ նա սի-րում է այդ կնոջ և ոչ թէ իրան, ցնորվում է, սակայն, այդ դրաման վերջանում է բաղաւոր-կերպով: Ստիվարտները յաղթվում են, ընդհա-նուր ներքին է շնորհվում, Տալբոթ վերադա-նում է, Էլիրան առողջանում է և նրանք վճռում են ամուսնանալ: Կրասնի դառնում է մեղադրում և սկզբում աղղու պիեսան վերջանում է սենտի-մէնտալ կերպով: Օպերայի երաժշտությունը աչ-ք է ընկնում իր բուռն զգացմունքով լի և գեղե-ցիկ մեղօղիաներով: Էլիրայի դերը կատարում էր Ջուզեպպինա Հուգեն, որ հրաշալի էր առաջին գործողությունները մէջ այն տեսարանում, երբ նա հիւսնում է իր զարդարանքների վրա և իր ծողով ծածկում է Հենրիէտայի դուրսը. հետեւալ գոր-ծողությունների մէջ այդ շնորհալի երգչուհին կարծեք յոգնած էր երգում: Հասարակության վրա զօրեղ տպավորություն գործեց նայնպէս և Ջորջիոի (Գոնզոլֆի) և Ռիչարդի (Ստիվարտ) դուէտը երկրորդ գործողությունները մէջ:

ՆԱՍՏԱԿ ԿԻՆՎԻՅ

Մարտի 8-ին

Քանի քանի անգամ գրվել է «Մշակի» մէջ մե-կերի անգործութեան մասին ներկայ պատմա-կան մոմենտում. ամեն կերպ ապացուցված է և պարզված, որ մեր հողերը հայրերը՝ բացի ուսու-նողից և կուշտ փորով քննելուց ոչ մի բան չեն անում: Փոքր դեռ ևս այդ կարելի էր լինէր տա-նել, եթէ նրանք զոնէ զգային որ իրանք բան չեն անում, հետեւապէս իրանցը չունեն ուրիշները գործունէություններ ծաղրել և հայտնել, որովհետեւ դուքար՝ թէ մեր պատուելի միաբանները դուրս գան Նիմֆադի պարիսպներից, եթէ նայն իսկ պա-րիսպից դուրս թնդաթնդները դրողան: Դոնէ այդ է երևում նրանց վարմունքը, որ կարելի է մի-այն ապատկալով բացատրել, ուր միայն թէ նը-րանք այնքան անձնուէր գտնվեն, որ թողնելով իրանց տաք և փափուկ սենեակները՝ գնան հեռու տեղեր, մանաւանդ այն երկիրը, ուր բայց լաց ու կոծից ոչ մի ուրիշ ձայն է լսվում, ու պաշտ-պան կանգնելով իրանց չարատեսի եղբայրներին՝ մի փոքր թեթեւացնեն դժբաղդ հալածվածների անապահով և արտասուալի գրությունը, ծառայեն այն ժողովրդին, որի արիւն-քրտինքը քանդված կօպէկները անուշ անելով հանդիստ հողով ապ-րում են և միմիայն «հողաց ըաշուռ»:

Պ. Թ. Մարտիանի «Օրէցօր» խորագրով յո-ւրածը («Մշակ» № 31) շատ լաւ նկարագրում է մեր կղերի ներքին ու արտաքին աշխարհը: Ամօթ մեր կղերին, որ նստած իր տեղում միմիայն հայ-հոյակ է այն մարդկանց, որոնք նայն իսկ «մարդ-դաստի» նպատակով օգնություն են հասցնում որբերին և սովածներին: Լաւ յիշում եմ մեր պաշտօնական օրգան «Արարատ» թափած հայ-հայտնները գերմանացի միսիոնարների գլխին, որ նրանք առիթից օգտվում են և մեծ թւով լու-սաւորականներին իրանց դաւանանքին կարծ-նում (Արարատ 97 թ. № 2): Այդ, հողերը հայ-երը, — լաւ կը լինէր, եթէ դուք փոխանակ հայ-հայտն, և գուցէ նախանձեղ, վերկենալիք ձեր

տեղերից և դնալիք այն երկիրը, ուր սպասում են ձեզ ամենայն օր ձեր «գաւառները» և հետեւ-իք օտարները օրինակին, որ ժողովուրդը ուրա-խանար և առէր. «անա եկել են մեր առաքելա-րները, որոնք դարձանելու են մեր ցաւերը»: Սե-կիլէ այդ դէպքում ձեզ խանգարեն օտար գոր-ծիչները, գուցէ այն ժամանակ իրաւունք կունե-նաք քարեր և հայտնաբերել շարեւ նրանց ե-րեսին, իսկ եթէ ներհեղու էք, գոնէ խոհեմութիւն ունեցէ՛ք պապանձված միալ և իդուր մի անպատ-էք ուրիշներին:

Որպէս նմաշ օտարների գործունէութեան, առաջ եմ բերում քաղաւածներ Բերլինի «Das Reich Christi» ամսաթիւի մարտի համարի «Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes» յաւել-ւածից, որ առանձնապէս հայոց հարցին է նու-իրված: Վերջիցս յաւելումով նկարագրված է Ուրֆայի հայոց որբանոցը և ծննդեան տօնի հա-նդէսը: Ուրֆայում կան 2 որբանոցներ աղաների համար և 3 համա աղջիկների համար. այդ որբա-նոցներում կան 97 հոգի 4—13 տարեկան հա-տակի. երեխաները հաւաքված են թէ Ուրֆայից և թէ չըղակայելի, ինչպէս՝ Ադիամանից, Սեբե-կից և այլ տեղերից: Որբանոցներում կան դպրոց-ներ, որտեղ աւանդվում են հայերէն և գերմանե-րէն, կրօն և տարրական գիտություն: Որբերի անուանացուցակը և ընդհանուր նկարը կցված են յաւելումին հանդերձ մի քանի կենսագրական տեղեկություններով: Որբանոցները գտնվում են միտ Սատուկի վերահսկողութեան տակ: Յօդ-ւածագիրը մանրամասն նկարագրում է ծննդեան տօնի հանդէսը, որ կատարվել է որբանոցներից մէկում 400 մանուկների մասնակցութեամբ և ջաղաքացիներից շատերի ներկայութեամբ: Երե-խաները կարգացել են ոտանաւորներ, երգել են գերմաներէն և հայոց երգեր և վերջը ստացել են մրգեղէններ, որ շատ է ուրախելով դժբաղդնե-րին, որոնք մոռացութեան են տրված իրանց հո-գեւորականությունից և միտնարվում են օտարնե-րի ուշադրութեամբ:

Պէտք է խոստովանել, որ յօդւածագիրը տեղ-դեմից չէ. — նա մէջ է բերում և այն փաստը, որ մանուկները դժուարութեամբ են մտնում որ-բանոցը, ինչպէս երևում է և հետեւեալ նկարա-գրից: Մի երեխայ, Յովհաննէս Ղեմիւրճեան, ա-մառը, երեկ կարօտելով իր մայրենի քաղաքին, փախաւ Սեբեկի (2 օր հեռավորութեամբ Ուրֆա-յից). նրան հասան Ուրֆայից 1 1/2 ժամանակ հե-ռավորութեամբ և վերադարձին, որից յետոյ նա այլ ևս փորձ չէ արել փախչելու: Մի ուրիշին, Սարգիս Հալաւեանին, երբ բերին որբանոց, նա չէր ուզում մտնել և լաց լինելով ասում էր թէ՛ «ես չեմ կամենում ձեր երեխան լինել». նրան հանգստացնելու համար տուին շաքար. բայց դարձեալ գոռում էր թէ «տուէք իմ մօրը, ես չեմ ուզում այստեղ մնալ». սակայն նրա սիրտն էլ շահեցին մի նկարով, որից յետոյ նա հանդուսա-ցաւ և այժմ որբանոցում է ապրում: Յաւելումին անապահով երեխան Հայաստանի փաւրալիք քա-րտէն է տուված:

Իմանալով այդ բոլորը, միթէ կարելի է չը նա-խատել մեր կղերին, որ նա էլ չէ բացանում որ-բանոցներ, չէ գործում և միմիայն խօսում է: Եթէ լուսաւորչականները դառնում են կաթօղի-կան բողբոջակա՝ դրա պատճառը այն է, որ օ-տար կղերը ամեն կերպ աշխատում է թեթեա-նիկ նրանց դառն վիճակը և ոչ թէ նստած վան-քի չորս պատերի մէջ՝ միմիայն «Արարատ» հրատա-րակում ուրիշների վրա նախատնդներ թափելու համար, և կամ թէ որբերի համար հաւաքված փողը չեն բաժանում ժողովրդականներին: Գործե-ցէ՛ք ու ապա խօսեցէ՛ք:

Նուսէ

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 13-ին

«Մշակ» մէջ պ. Տ. Յ. գրաստեղծ իմ «Ամու-րին» դրամադր, գտնում է, որ СТАРЫЙ ХОЛОСТАКЪ-ն տիպը դ ժ գ ո յ ն է և լի հ ա կ ա ս ու թ ի շ ն ե-ր ու լ ի ի ս կ ամբողջ գրութեամբ անաշուղդ: Նա կը յարգի պարոնի կարծիքները այն ժամանակ, երբ նա ապացուցանել իր ասածները փաստե-րով և չը սահմանափակվի անորոշ անխաբիւ-րով: Օրինակ, «ՀԱՅԿԱՅ» լրագիրն էլ (№ 46) ընդ-հակառակը նկատում է, որ «Ամուրին» կենդա-նի գրութեամբ է և կարգացվում է հետա-րքը գրութեամբ: Դարձեալ անորոշ բառեր: Այդպիսի խօսքերով չէ կարելի ցոյց տալ գրութե-ամբ արժանատիությունները կամ թերությունները: Անհրաժեշտ են փաստեր և ապացուցներ: Այդ փաստերը և ապացուցներն են կարող երբեմն խրախուսել հեղինակին կամ ուղղել նրա թերու-թիւնները: Նպատակ չունենալով պաշտպանելու իմ դրամադր, որի դատաւորները կարող են լի-նել ընթերցողները, կը ցանկանայի, որ մա-տենալիս, առանց հեղեղությունների, ցոյց տա-ր գրութեամբի պակասությունները: Այլ կերպ հեղե-նակը չէ կարող օգտվել քննադատությունից:

Յարուկին Թումանյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի «Մասիա» լրագրի մէջ կարգում ենք. «Վանէն վերջերս հասած գրություններ տեղայն և Աղթամարայ գիւղերու ժողովրդեան ձմեռն սաստիկութեան պատճառաւ կրած նեղությունը կը նկարագրեն և անմիջական օգնություն կը հայցեն: Պատրիարք կարգադրութիւն բրաւ որ-պէս զի որ և է նպաստ ուղղակի գիւղերը զրկուի, քանի որ քաղաքացիներուն վիճակը ան-համեմատ աւելի բարւոք է գիւղացիներէն»:

«НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրագիրը հաղորդել էր, որ Թիֆլիսից վաղուց գաղթած հայեր, թուով մօտ 55 ընտանիք, խնդիր են ներկայացրել կառա-վարութեան, որ իրանց տրվի մի հողաբաժին: Այդ լուրը, ինչ խօսք, հանգստութիւն չէ տուել պ. Վէլիչկօին և նա «ՀԱՅԿԱՅ»-ի երէկվայ հա-մարում շտապեց յայտարարել, որ ճիշդ է, եղել է այդպիսի խնդիրք, բայց կառավարութիւնը մերժել է: Եթէ այդքանով էլ բաւականաւոր «ՀԱՅԿԱՅ»-ի հայակեր խմբագիրը, մենք ոչինչ չէինք ունենայ նրա դէմ: Բայց առանց կեղծոտ ինտի-նուացիաների պ. Վէլիչկօ չէ կարող մի բաւ-անդամ գրել հայերի մասին, այն էլ Թիֆլիսի ժա-մանակներս բողոքովն կտրել են բանաստեղծ-խմբագրի քուռն ու հանգստութիւնը: Եթէ յի-շեմք թէ մի տարաբախտ, կիսամեռ ժողովրդի գլխին ինչ ցեխեր, ինչ անուանարկութիւններ թափեց տպագրական խօսքը այդ անարժան սպասուորը, մենք չենք վարմանալ, որ այժմ էլ հեղքելով «НОВОЕ ОБОЗРѢНІЕ» լրագրի լուրը, պ. Վէլիչկօ շտապեց յայտարարել զանազան աղ-նարկներով թէ վերջին տարիներում մեղ մօտ եկած մօտ 20,000 ընտանիքները արդէն իրանք իրանց համար հողեր են վերցրել և այդ խնդիրք-ները տրվում են միայն աչք փակելու համար:

Ներուշաթի, մարտի 16-ին, Թիֆլիսի քաղա-քային դռման որոշեց այսուհետեւ կնիք դնել ծախվող մսի վրա. այդ կնիքը պէտք է նշանակի, որ միսը երկարվել է հետազոտութեան և ազատ է որ և է հիւանդությունից: Միս գնողները կարող են պահանջել, որ իրանց ցոյց տրվի կնիքը և նրա բացակայութեան միջոցին կարող են դան-գատվել:

Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են, որ յայտ-նի հայ երաժշտադէս Չուհանեան ծանր կերպով հիւանդ է Զմիւռնիայում:

Ժողովրդական լուսաւորութեան միսիստորու-թիւնը յայտնեց, թէ իգական սեռին պատկանող այն անձինք, որոնք ձեռք են բերել արտադա-մանեան համալսարանների դիպլոմները բժշկա-պետի կոչումով, կարող են լատիներեն լեզուից ըննություն տալ և ապա միջնորդել, որ թիջ տրվի նրանց բժշկի ըննություն տալ ուսուցա հա-մալսարաններից մէկում:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ շուտով իգական դպրոցներում կարգվելի աշա-կերտուհիներին կօրսէտ հազնել, որովհետեւ հաստատապէս ապացուցված է դրա վնասակա-րութիւնը:

Թիֆլիսի փողոցները ներկայումս նորոգվում են քաղաքի հաշուով և պէտք է խոստովանել, շատ վառ կերպով: Նոր քաղաքային կանոնադրութիւնը փո-ղոցները նորոգելու հոգը դնում է տանտէրերի վրա. սակայն Թիֆլիսի դռմայի կարծիքով տան-տէրերը աւելի ևս վատ կը տանեն գործը, քան քաղաքը: Դռման մարտի 16-ի նիստում ըննելով այդ խնդիրը, չը կարողացաւ ոչ մի դրական որոշ-ման գալ: Բոլոր առաջարկված ձեւակերպութիւն-ները մերժվելին ձայների մեծամասնությամբ:

Ինչպէս յայտնի է, Բօլզարիայի Կաղանիկ քա-ղաքի մէջ և նրա չըղակայքում պատրաստվում է մեծ քանակութեամբ վարդի իւղ: Կաղանիկի վարդերը համարվում են առաջնակարգ իւղե իւղաբեր վարդեր: Մեր կառավարութիւնը, ցան-կանալով վարդի իւղ պատրաստելը տարածել Անդրկովկասում, բերել է տուել մի քանի հա-րկու թուփ և նրանց բուսցնում է մեծ խնամ-քով Կաղանիկում գտնվող Ուղեի կաղանածրում: Աւելորդ չենք համարում նկատել, որ իւղաբեր լաւ վարդեր կան և Պարսկաստանում, որտեղից նայնպէս կարելի է ձեռք բերել թուփեր և նրանց անցնան փորձեր անել մեր երկրում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՍՏԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՅ

Լ. ա. պ. զ. գ. մարտի 20-ին
Ներու. օր. առաջ վերջնականապէս որոշվեց՝

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13